



## Մարալիկ

Քաղաքային համայնք Շիրակի մարզում, Մարալիկի տարածաշրջանում, նախկին Անիի վարչական շրջանի կենտրոնը: Սկզբում ստեղծվել է որպես գյուղական բնակավայր, ապա 1926 թ-ից դարձել է քաղաքատիպ ավան: 1995 թ-ի վարչատարածքային ռեֆորմից հետո դասվել է Հայաստանի քաղաքային բնակավայրերի շարքին: Նախկինում ունեցել է Մոլլա, Մոլագյոկա, Մոլլա, Մոլլա Գյոքչա, Մոլլա Կյոքչա անվանումները: Մարալիկ է վերանվանվել 1935 թ-ին: Անվանումը պայմանավորված է քաղաքի մոտակայքում գտնվող Մարալ լեռան անվան հետ:

Քաղաքը տեղադրված է Երևան-Թալին-Գյումրի ավտոմայրուղու վրա և հանդիսանում է երկաթուղային կայարան Մարալիկ-Պեմզաշեն-Արթիկ-Գյումրի երկաթուղու վրա: Մարզկենտրոնից գտնվում է 27կմ հեռավորության վրա:

Քաղաքը տեղադրված է Արագածի արևմտյան լանջին, Մարալիկի բլրապատ հարթավայրում՝ ծովի մակարդակից 1750մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Շրջակայքում կան շինարարական ավազի, գորշ և վարդագույն տուֆերի, կավի հանքեր, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:

Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի արդյունքում:

Մարալիկում պահպանվել է ս. Աստվածածին անունով փայտածածկ եկեղեցին, որին կից 1911 թ-ին գործել է դպրոց: Քաղաքից հարավ՝ բլուրների վրա գտնվում է մատուռ, որը եղել է մշտական ուխտատեղի: Ժողովուրդը այն անվանել է ս. Ստեփանոս վանք և

հորինել է ավանդություն: Իբր այստեղ հաճախ մատաղի եկող եղնիկների վանքն ու գյուղը կոչել են Մարալիկ:

Քաղաքի բնակչության նախնիները այստեղ գաղթել են 1828-29թթ Կարսի մարզի Ղզլախաչախ գյուղից, Խնուսի, Բասենի, Ալաշկերտի, Մուշի գավառներից: 1831 թ-ին ունեցել է 971, 1897 թ-ին՝ 1302, 1926 թ-ին՝ 1646, 1939 թ-ին՝ 1882, 1959 թ-ին՝ 2177, 1980 թ-ին՝ 4443 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 6943 մարդ: Մեռային կազմում տղամարդիկ կազմում են 43%, կանայք՝ 57%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 56%, հետաշխատունակներ՝ 16%: Ունի երկու միջնակարգ, երժշտական, մարզական դպրոցներ, երկու գրադարան, երկու մանկապարտեզ, մշակույթի տուն, հիվանդանոց, պոլիկլինիկա, բուժկետ, կապի հանգույց:

Քաղաքում կան մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ: Այստեղ են գտնվում բամբակագործվածքային ֆաբրիկան, հիդրոսարքավորումների և էլեկտրասարքավորումների արտադրամաս: Ունի շինարարական իրերի և շինանյութերի արտադրամաս, որոնք զբաղվում են որմնաքարերի արտադրությամբ: Ունի պանրի գործարան:

Քաղաքի հողային ֆոնդի մոտ 5% օգտագործվում են որպես բնակելի հողեր և տնամերձ հողեր: Որպես գյուղատնտեսական նշանակության հողեր օգտագործվում են պետական նշանակության հողերը: Հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (1810հա), խոտհարքերը (990հա): Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ արդյունաբերական ձեռնարկությունների հզորացումը, որը կկանխարգելի մեծ մասշտաբների հասնող արտագաղթը:

Կարևորվում է դպրոցի և դպրոցական գույքի վերանորոգումը, ռոռզման և խմելու ջրի ջրագծերի, ներքաղաքային ճանապարհների վերանորոգումը, փողոցների գիշերային լուսավորության հարցը: Առաջնային են համարվում նաև մշակութային կոթողների վերանորոգումը, գազաֆիկացումը:

## **Պատմություն**

---

Ժողովրդական ավանդությամբ անվան առաջացումը բացատրվում է հետևյալ կերպ:  
Ամեն տարի մի սարի մարալ (եղնիկ) հոժար կամքով եկել է այստեղ, մատաղվելու  
համար գլուխը դրել Սուրբ Ստեփանոս վանքի դռանը: Գյուղացիները բռնել են  
մարալին և մատաղ արել: Մի անգամ էլ որսորդը հրացանով սպանել է մարալին:  
Դրանից հետո մարալներն էլ չեն երևացել: Գյուղի անունն էլ մատաղվող մարալների  
հիշատակի համար Մարալիկ են դրել.

## Բնակչություն

---

Նախնիները 1828-1829 թթ.-ին գաղթել են Կարսից, Խնուսից, Ալաշկերտից և Մուշից:

Մարալիկի ազգաբնակչության փոփոխությունը.<sup>[2]</sup>

Տարի	1831	1897	1926	1939	1959	1980	2001	2004
Բնակիչ	971	1302	1646	1882	2177	4443	5782	5800

## Տնտեսություն

---

Քաղաքի վարչատարածքում կա 1800 հա վարելահող, որից 240 հա ոռոգելի:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային  
կուլտուրաների մշակությամբ, զարգանում է նաև արդյունաբերությունը:

Մարալիկի ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունը  
բամբակամանվածքային ֆաբրիկան է (ունեցել է մոտ 2000 աշխատող), որն այժմ  
մասամբ է գործում: Ամենահինը Լուսատեխնիկական էլեկտրասարքավորումների  
գործարանն է (1962թ.), որն ունեցել է 600 աշխատող, այժմ չի գործում: Ներկայումս չեն  
գործում նաև շինանյութերի և շինիրերի կոմբինատը, երեք շինարարական  
կազմակերպությունները, պանրագործարանը, ավտոտրանսպորտային  
ձեռնարկությունը, երկաթուղային կայարանը, կինոթատրոնը, կենցաղային  
սպասարկման կոմբինատը:

## Պատմամշակութային կառույցներ


---

Մարալիկում պահպանվել են 1903 թ.-ի փայտածածկ սբ. Աստվածածին (V-VI դարեր) և կաթոլիկ Սբ. Պողոս-Պետրոս (XVII-XX դարեր) [եկեղեցիները](#), “Կարմիր” (XIX-XX դարեր) և Սբ. Ստեփանոս [վանքերը](#), կիկլոպյան ամրոցը և մեկ [մատուռ](#):

Քաղաքն հայտնի է վարչատարածքում եղած վաղ և ուշ միջնադարյան խաչքարներով:

Հասարակական կառույցներ [\[խմբագրել\]](#)

Գործում են կապի և փոստային ծառայությունները, երկու դպրոցները, ուսումնարանը, մշակույթի տունը, շրջանային գրադարանը, հյուրանոցը, երկու նախադպրոցական հիմնարկ, հանրային սննդի օբյեկտներ և այլն:

Երկիր	 Հայաստան
Մարզ	Շիրակի
Քաղաքապետ	Արտակ Գևորգյան
Առաջին հիշատակում	5-րդ դար
Այլ անվանումներ	Միկոյան
Մակերես	4.06 կմ <sup>2</sup>
Բարձրություն ծովի մակարդակից	1750 մ
Խոսվող լեզուներ	Հայերեն
Բնակչություն	6171 <sup>[1]</sup> մարդ(2012)
Ազգային կազմ	Հայեր
Կրոնական կազմ	Հայ Առաքելական եկեղեցի
Տեղաբնականուն	մարալիկցի
Ժամային գոտի	UTC+4
Հեռախոսային կոդ	+374 (242)
Փոստային ինդեքս	2901